



«Չաղորդությունը մեր մեջ այրում է մեղքերը, ազատում է դևերից և լուսավորում է մեր միտքը»:

Աբբա Իսիդոր

ՈՒՂԱԿԱՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ



ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ԱՍՄԱԹԵՐԹ

2023 թ., ՆՈՅԵՄԲԵՐ 11 (484)



Վեհափառ Տեր,

Արարատյան ճարտարապետական թեմի հավատավոր զավակների և հոգևորականաց դասի անուսից շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը՝ գահակալության 24-ամյակի առթիվ:

Տարիներ առաջ Աստծո նախախնամությամբ բազմեցիք առաքելահաստատ ճարտարապետական գահին՝ ճայաստանյայց եկեղեցու պայծառությունը կոչված ծրագրեր իրականացնելու և մեր ժողովրդի կյանքում եկեղեցու առաքելությունը գործող ներկայություն դարձնելու տեսլականով:

Ձեր գահակալության տարիներին ճայ եկեղեցին առավելագույն ջանասիրությամբ առաջացավ իր առաքելության մեջ՝ որպես օրինակ ունենալով Ձերդ Սրբության անձանձի ծառայասիրությունը և անսակարկ նվիրումը: «Քրիստոնեությունը մեր ժողովրդի համար արտաքին զգեստավորում չէ, այլ մաշկի գույն, նկարագիր, էություն, որ ծաղկող գրչով դրոշմվել է մագաղաթին և մատյաններ շնչավորել, աներկբա հավատով հայրենյաց մեր սուրբ հողին մարմնավորվել որպես խաչքար, վանք ու եկեղեցի: Աստվածաշնչյան է ճայաստանը, ճայ Առաքելական մեր Սուրբ եկեղեցու գոյությամբ, մեր ժողովրդի անցյալ ու ներկա հիշատակներով, ավելի ևս՝ նորօրյա հավատի մեր վերագարթունքով, որպես երաշխիք աստվածաշնչյան մեր հարատևության» (Գարեգին Երկրորդ Կաթողիկոս):

Մաղթում ենք Ձեզ անսպառ եռանդ, կենսունակություն և երկար տարիների պայծառ գահակալություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Թող մեր Տեր Յիսուս Քրիստոս շարունակի բազմարդյուն պահել Ձերդ Սրբության ջանքերն ի պայծառություն մեր Սուրբ եկեղեցու և ճայրենիքի: Ամեն:

Մատչիմ ի համբույր Ձերդ Սրբության Սուրբ և Օծյալ Աջույն՝

ՆԱՎԱՍՏՐԳ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ ԿՃՈՅԱՆ



«ՈՐՏԵՂ ՈՐ ՁԵՐ ԳԱՆՁԵՐՆ ԵՆ, ԱՅՆՏԵՂ ԷԼ ԵՎ ՁԵՐ ՍՐՏԵՐԸ ԿԼԻՆԵՆ»

Մատթեոս 2 21


«Գանձ» բառը նշանակում է երջանկություն կամ էլ մատնացույց է անում մեր սիրո ու բաղձանքի զխավոր առարկային: Չէ որ մեր սիրտը երջանկություն է փափագում, մեր տենչանքները երջանկության են ձգտում: Երջանկության շուրջն են պտտվում մեր բոլոր մտածումներն ու երազանքները, երջանկությամբ ենք ուրախանում, երջանկության հույսով ենք ցնծում ու երջանկության ակնկալությամբ ենք մխիթարվում:

Սիրտը և էությունը մուսն են: Բարոյականության աչքը սիրտն է, այնտեղ՝ սրտի մեջ է բարոյական գործերի գապանակը կամ շարժառիթը: Կամքը սրտի համաձայն է գործում: Եթե մեր երջանկությունը ձևավորող տարրերը կամ մեր սիրո ու բաղձանքի զխավոր առարկաներն աշխարհային, երկրային և մարդկային են, ուրեմն մեր սիրտն ու էությունն էլ են այդպիսին, այսինքն՝ ունայն, ստոր և չար: Իսկ եթե մեր կողմից սիրված կամ բաղձալի իրերը երկնային, հոգևոր ու աստվածային բարիքներն են, ապա մեր սիրտն էլ է այդպիսին, այսինքն՝ վեհ, սուրբ և կատարյալ:

...Աստված անհուն խնամք, գործվանք ու սեր ցուցաբերեց մարդու նկատմամբ, անհուն բարիքներ, երջանկություն և երախտիքներ պարգևեց ու խոստումներ տվեց նրան, և այդպիսով մարդու մեջ սեր ու բաղձանք ծնեց իր հանդեպ: Եվ մարդը, ապավինելով Աստծուն ու Նրա շնորհած պարգևներին, սիրելով ու փափագելով Նրան և Նրա խոստումներին՝ ազնվացավ, սրբվեց ու կատարելագործվեց: Հավատացյալի՝ Քրիստոսի հետ միության խորհուրդը բացատրվում է սույն սկզբունքով. մեր Տերն ասում է. «Ով որ սիրում է Ինձ, պիտի պահի Իմ պատվիրանները» (հմմտ. Գով. 14.23): Այդպիսով Քրիստոսի բնությունը, սրբությունն ու կատարելությունը խտանում են մարդու սրտի մեջ...

...Այդպես է, որ կա, իմ եղբայրներ: Եթե սիրում եք երկրավոր, մարդկային ու աշխարհային իրերն ու երևույթները՝ հակառակ մարդու կոչմանը, հակառակ մեզ շրջապատող սրբություններին, ուրեմն դուք սուրբ, վեհ ու բարի չեք, այլ չար եք, ստոր և ապականված:

Սի կողմ թողնենք այդ ապականված մթնոլորտն ու գծուծ և ստորին նկարագիրը, քանի որ մեզ են սպասում լուսերան գնդերը, սուրբ ու վեհ նկարագրի տեր մարդիկ: Մարգարեների, առաքյալների և մարտիրոսների գնդերն են նրանք: Լուսավոր արևածագից ավելի պայծառ, երկն-



«Փրկչի դիմանկարը»
Եկարիչ՝ Մամվել Լաճիկյան

քից ավելի ջինջ, խնկից ավելի անուշաբույր, բոլորովին երկնային, հոգևոր ու աստվածային տարրերով խմորված և կազմված՝ նրանք շողշողում են հրաշագան գարդարանքներով: Տեսեք, թե ինչպես է սուրբ Պողոսը խոսում փիլիպպեցիների հետ՝ ասելով. «Գիտեմ զրկանքով ապրել, գիտեմ: Ամեն ինչում, բոլոր պայմանների տակ, սովո-

րել եմ թե՛ կուշտ լինել, թե՛ քաղցած մնալ, թե՛ առատության մեջ լինել, թե՛ զրկանք կրել: Ամեն ինչի կարող եմ Նրա՝ շնորհիվ, Ով ինձ գորացրեց» (Փիլիպ. 4.12-13): Որտե՞ղ է Պողոսի սիրտը, այդ վեհ ու սուրբ սիրտը. Քրիստոսի մեջ: Նայեք, թե ինչ է ասում դարձյալ. «Բայց ինչ որ ինձ համար շահ էր, այն վնաս համարեցի Քրիստոսի համար... Նրա համար ամեն ինչից զրկվեցի, և այդ բոլորը աղբ եմ համարում, որպեսզի շահեմ Քրիստոսին և գտնվեմ Նրա մեջ» (Փիլիպ. 3.7-8): Նույն միտքն է արտահայտում նաև սուրբ Գովհաննեսը. «Ինչ որ տեսանք և լսեցինք, պատմում ենք ձեզ, որպեսզի դուք էլ հաղորդակից լինեք Նրան մեզ հետ, ինչպես որ մենք հաղորդություն ունենք Գոր հետ և Նրա Որդու՝ Յիսուս Քրիստոսի հետ» (Ա Գով. 1.3): Այս առաքյալներն իրենց սիրելի և պաշտելի Աստծուց են ստացել այդ սուրբ և կատարյալ բարոյական նկարագիրը...

Շատերը, որ մեզ նման մարդիկ էին, իրենց համոզեցին երկնքի ձեռքն ու վերստին նորոգվեցին. մենք էլ լինենք նրանց նման: Կանգնենք Քրիստոսի շնորհների գահի առջև և ասենք. «Իմ մեջ սուրբ սիրտ հաստատիր, Աստված, և արդար հոգի՝ նորոգիր իմ որովայնում» (Սաղմ. 50.12): Եվ այդքան մեր այդ սիրտը կփափագի դեպի բարին: Իսկ երբ Աստված տեսնի, որ մենք Նրան ենք համոզում մեր հոգիները, որքան ավելի մեծ գործով և ջերմությամբ պիտի զրկի մեզ, պիտի սրբի ու ջնջի մեր չար նկարագիրը, աղտեղի և գծուծ էությունը, ապականված սիրտը: Եվ իր խոցված կողի կրկնավտակ աղբյուրից որքան սեր ու կարեկցանք պիտի ներարկի մեզ, մեր սրտին: Ինչպիսի՞ գթասրտությամբ նորից, իր արարչական մատներով պիտի վերստեղծի մեզ լույսի, հոգու, սրբության, բարության, համբերության, սիրո և արդարության հրաշագան բաղադրատարրերով՝ ի փառս և ի գովեստ իր Անվան, Որին փառք հավիտյանս. ամեն:

հորեն քահանա ՏԱՂԼՅԱՆ
«Փոքր քարոզչիք ժողովրդի համար»
Կ. Պոլիս, 1905 թ.

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԵԿԵՂԵՑՈՒ ՏԱՐԵՂԱՐԾԻ ԱՌՈՒՎ ՕՍՎԵՑԻՆ ԽԱՉՎԱՌՆԵՐԸ

ոյեմբերի 19-ին Արարատյան Հայրապետական Թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ թեմի Սուրբ Երրորդություն եկեղեցին նշեց օծման 18-րդ տարեդարձը:

Նավասարդ Արքազանին Սուրբ Երրորդություն եկեղեցու համայնքը դիմավորեց հոգևոր հովիվ Տեր Արարատ քահանա Օրդոյանի ու խորհրդակատար Տեր Հուսիկ քահանա Դոխոյանի գլխավորությամբ: Արքազան հորն ուղեկցում էին Արաբկիրի Սուրբ Խաչ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Պարթև քահանա Մուրադյանը և առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցու սպասավոր Հովհաննես սարկավազ Ներսեսյանը:

Տոնական միջոցառումից առաջ Արքազան հոր ձեռամբ օծվեցին եկեղեցու յոթ նորընծա խաչվառները: Խաչվառները վերջին տարիների ընթացքում եկեղեցուն են նվիրաբերել համայնքի անդամները: Դրանց վրա պատկերված են աստվածաշնչյան տեսարաններ և սրբապատկերներ:

Արարողության ավարտին, շնորհավորելով համայնքին, Արքազան հայրն ի մասնավորի ասաց. «Սիրելի՛ բարեպաշտ հայրորդիք, այսօր գտնվում ենք այս տաճարում, որպեսզի օծենք եկեղեցու խաչվառները և նշենք Սուրբ Երրորդություն եկեղեցու օծման տարեդարձը՝ ոգեկոչման գեղեցիկ ու հիշարժան այս օրը:

18 տարի առաջ ազգիս Վեհափառ Հայրապետ Գարեգին Երկրորդի նախաձեռնությամբ և ազգային բարերար, երջանկահիշատակ Լուիզ Սիմոն Մանուկյանի ազնիվ ու սիրահոժար նվիրատվությամբ վեր հառնեց Աստծո այս տունը՝ որպես հոգևոր ծառ, որին պտղաբեր դարձնողները մեր հավատացյալներն են:



Աղոթում ենք, որ Տիրոջ Սուրբ Հոգին միշտ ներգործի Աստծո տան մեջ՝ մեր հոգին կապելով երկնքի հետ: Շնորհավորում ենք ամենքիդ, ուժ, եռանդ և մտասևեռում մաղթում, իսկ հոգևոր դասին՝ բազում շնորհներ ու առաքելության բարձր գիտակցում, որ Աստծո տունը միշտ պահեն Սուրբ Հոգու ներգործության ներքո»:

Ապա Արքազան հայրը «Պահպանիչ» աղոթքով արձակեց ներկաներին:

Երեկոյան Սուրբ Երրորդություն եկեղեցու հանդիսությունների սրահում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված եկեղեցու օծման 18-րդ տարեդարձին:

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՏՈՆԵՑ ՕՍՏԱՆ 18-ՐԴ ՏԱՐԻՆ

Արդեն 18 տարի Երևանի Հարավ-Արևմտյան թաղամասում հնչում են Սուրբ Երրորդություն եկեղեցու զանգերը:

Համայնքի բնակիչները հիշում են, թե ինչպես 2001 թվականին մեկնարկեցին եկեղեցու շինարարական աշխատանքները: 4 տարի սպասել են, որ վերջապես եկեղեցու զանգերն աղոթքի կանչեն. «Յուրահատուկ շունչ է փոխանցում համայնքին, տեսքը շատ գեղեցիկ է, ուրախ ենք, որ մոտակայքում ունենք նման վայր, ուր կարող ենք անընդհատ այցելել»:

«Սուրբ Երրորդությունը լինելու է ավանդական ճարտարապետության նորոգյալ վկայարանը». իր կենդանության օրոք նշում էր եկեղեցու ճարտարապետը՝ Բաղ-

դասար Արզումանյանը:

Եկեղեցու օծման սրբազան արարողությունը կատարվել է 2005 թվականի նոյեմբերի 20-ին՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսի:

Օծման 18-րդ տարեդարձը համայնքում նշեցին միասին՝ աղոթքով, խոսքով ու երգով: «Պատերազմից, կորուստներից հետո թեև դժվար է վերադառնալ կյանք, բայց պետք է գործել: Այս պատճառով օծման տարեդարձը



նշում են ավելի հարուստ ծրագրով: Մեզ պետք է վերակենդանացում: Մենք իրավունք չունենք նստելու ու ողբալու: Անցածը պիտի հիշենք, անցածից դասեր քաղենք և պայքարենք հանուն արժանապատիվ կյանքի ու արդարության, զորացնենք հոգևոր կյանքը», - ընդգծում է Սուրբ Երրորդություն եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Արարատ քահանա Օրդոյանը:

Միջոցառումը կազմակերպվել է ամբողջ եկեղեցու՝ Երիտասարդաց, Տիկնանց, Տղամարդկանց միությունների և կիրակնօրյա դպրոցի սաների ջանքերով:

Տեր Արարատի խոսքով՝ ունեն ակտիվ համայնք. օր օրի ավելանում է Սուրբ Պատարագին մասնակցողների թիվը:

ՕԳՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ՝ ԱՐՅԱՆԱՅՆՅԵՐԻՆ

Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցների կողքին է Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին: Անունը, դեղորայք, գունար, կահույք ու տեխնիկա ստանալու համար Երևանում ապաստան գտած արցախահայերը դիմում են նաև մայրաքաղաքի եկեղեցիներ:

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ թեմում իրականացվում են հոգևոր ու սոցիալական աջակցության ծրագրեր:

2023 թվականի հոկտեմբերի սկզբից յուրաքանչյուր համայնքում քահանաների նախաձեռնությամբ իրականացվում են տարբեր աշխատանքներ՝ օգնելու արցախահայերին: Նախաձեռնությունները տարբեր են: Գործը զուլխ են բերում համայնքի ուժով՝ ըստ կարիքի:



ԱՅՑ սոցիալական բաժնի ղեկավար Շուշան Պետրոսյանն ընդգծում է. «Օգնության հավաքագրումը բխում է նրանից, թե ինչ կարիք ունեն մարդիկ: Գրանցում ենք, համաձայնեցնում բարերարների հետ: Հիմնականում սննդի կարիք ունեն: Տրամադրել ենք սննդի փաթեթներ, հիգիենայի, անկողնային, կենցաղային պարագաներ, տաք հագուստ»: Ծրագիրն իրականացնելու համար հավաքել են

տվյալներ, գնահատել կարիքները, գործակցել համայնքապետարանների հետ: Փորձել են հասկանալ, թե ինչով կարող է եկեղեցին օգնել այս պահին ու հետագայում: Կարիքը հասկանալուց հետո՝ միասին փորձել են աջակցել: Տարբեր եկեղեցիներում տրվել են նաև նվեր-քարտեր, գունար՝ բազմազավակ, կարիքավոր ընտանիքներին: Մոտ 1300 ընտանիքի տրամադրվել է նյութական օգնություն: Արցախահայերը ստացել են նաև հոգևոր աջակցություն՝ դժվար իրավիճակը հաղթահարելու համար:


Շուշան Պետրոսյանը հավելում է՝ իրականացվում են նաև այցելություններ՝ տներ, բժշկական կենտրոններ, ծերանոցներ. «Աշխատանքներ են տարվել՝ կիրակնօրյա դպրոցներում արցախահայ երեխաների ուսումնառությունն ապահովելու ուղղությամբ, իսկ երիտասարդները սկսել են հաճախել Երիտասարդաց միություններ»:

Աշխատանքներում բացի բարերարներից ներգրավվել են եկեղեցական կառույցները:

Ծրագրի նախնական փուլում արցախահայերը, անկախ հաշվառման վայրից, օգնություն էին ստանում ցանկացած եկեղեցուց: Այսօր աշխատանքն ավելի համակարգված իրականացնելու համար կարիք ունեցողները պետք է դիմեն այն համայնքների եկեղեցիներ, որտեղ հաշվառվել են:

ԴՐՏԱՐԱՐԱԿՎԵԼ Է ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ «ԳԻՐՔ ՊԱՏՈՑ» ԵՐԿՐ


Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ իրատարակվել է համաքրիստոնեական եկեղեցու մեծագույն սրբերից Բարսեղ



Կեսարացի հայրապետի «Գիրք պահոց» երկը: Սա նրա հոգևոր ժառանգության գլուխգործոցներից է, որն իր ուրույն տեղն է զբաղեցնում ոչ միայն հայոց, այլև համայն քրիստոնեական հոգևոր գրականության երևելի աշխատությունների շարքում:

Երեսուներեք ճառից բաղկացած սույն ժողովածուն բովանդակում է նամակներ, դավանաբանական բնույթի ստեղծագործություններ և ճառային մեկնողական աշխատություններ, որոնց կարևորության գիտակցումը և այդ ճառերի երկերն այժմյան հավատացյալների ունկերին լսելի դարձնելու բարի փափագը ուղղորդել են լույս ընծայելու գրաբարից արևելահայերենի փոխադրված գրական ժառանգության այս արժեքավոր կոթողը:

Արարատյան Հայրապետական Թեմի տեղեկատվական բաժին



ԴԵԿՏԵՄԲԵՐ 5


ՍՈՒՐԲ ԱՐԳԱՐ ՆԱԽԱՎԿԱ ՄԵՐ ԱՆԴՐԱՆԻԿ ԹԱԳԱՎՈՐԸ, ՈՐ ՀԱՎԱՏԱՅ ՔՐԻՍՏՈՍԻՆ

ատմահայր Մովսես Խորենացին Արգար թագավորին ներկայացնում է իբրև Հայոց թագավոր: Միմեռն կաթողիկոսն էլ սա հիմք ընդունելով՝ հայոց «Տոնացույց»-ի վերակազմության և առաջին տպագրության ժամանակ հետևյալ ձևով է ներկայացնում նրա հիշատակը. «Նախավկայ եւ ի Քրիստոսս անդրանիկ հավատացեալ թագաւորին սրբոյն Արգարոս», և մինչև այսօր այդ անվան ենթոյն նա տոնվում է մեր եկեղեցու մեջ:

Ըստ քրիստոնեական ավանդության՝ Եդեսիայի Արգար թագավորն առաջին թագավորն է, որը, Քրիստոսի կենդանության օրոք, լսելով Նրա հրաշագործությունների մասին, հավատացել է, որ Նա Աստծո Որդին է: Հնագույն պատմական աղբյուրների վկայությամբ՝ Արգարը հայոց թագավոր էր, Արշամի որդին, որ քաղաքական նկատառումներով իր արքունիքը տեղափոխել էր Եդեսիա:

Ավանդությունը պատմում է, որ Արգարը բռնված էր մորթային անբուժելի հիվանդությամբ: Քաղաքական ինչ-ինչ հարցեր կարգավորելու համար նա պատգամավորներ է ուղարկում Հռոմ, որոնք վերադառնում են Պաղեստինով: Այս մարդիկ երուսաղեմի մեջ ականջալուր և ականատես են լինում Հիսուսի հրաշագործություններին և իրենց տեսածն ու լսածը պատմում են իրենց թագավորին: Արգարը հավատում է պատմածներին և այն համոզում է ունենում, որ Հիսուս գերբնական էակ է, մինչև իսկ Աստծո հայտնությունն է երկրի վրա և, հետևաբար, միայն Նա կարող էր բուժել իր հիվանդությունը: Ուստի մի ցամակ է գրում Հիսուսին այս սկզբնավորությամբ. «Արգար Արշամայ [որդի], իշխան աշխարհի, առ Հիսուս Փրկիչ եւ բարերար, որ երեւեցաւ աշխարհի երուսաղեմացոց ողջոյն»: Այս ցամակի մեջ Արգարը ասում է, թե լսել է Հիսուսի և իր բժշկությունների մասին և եկել է այն եզրակացության, թե այսպիսի հրաշագործություններ կատարող

նույն Ինքն Աստված է և կամ Աստծո Որդի: Ուստի խնդրում է, որ օգնություն հանձն առնի. գա իր երկիր և իրեն բժշկի: Արգարը տեղյակ է լինում նաև, որ հրեաները նեղություն են պատճառում Հիսուսին, ուստի Հիսուսին հրավիրում է իր փոքրիկ, բայց գեղեցիկ քաղաքը՝ Եդեսիա, որ երկուսի համար ավելի քան բավարար է: Արգարի թղթատարը գնում է Երուսաղեմ, գտնում է Հիսուսին և հանձնում է նամա-



կը: Հիսուս, ըստ պատմահայր Խորենացու, գրավոր է պատասխանում Արգարի նամակին. «Երանի նրան, որ հավատում է ինձ առանց տեսնելու, որովհետև գրված է իմ մասին: Ինձ տեսնողները չպիտի հավատան ինձ, բայց նրանք, որ չեն տեսել ինձ՝ պիտի հավատան և հավիտյան պիտի ապրեն»:

Փրկիչը պատասխանում է, որ Ինքը պետք է ավարտի իր առաքելությունն Իսրայելում, որից հետո կառաքի իր աշակերտներից մեկին՝ բժշկելու Արգարին և պարզելու հավիտենական կյանքի ավետիսը: Արգարի սուրհանդակը Քրիստոսի պատասխանի հետ բերում է նաև Նրա

կենդանագիր պատկերը, որը Տերն Իր դեմքի հայունով տպավորել էր դաստառակի վրա:

Արդարև, ըստ խոստման, Քրիստոսի համբարձումից հետո Եդեսիա է գնում Թադեոս առաքյալը, որ նախ իջևանում է Տուբիա անունով մի հրեա իշխանի տանը, որտեղից էլ հրավիրվում է Արգարի մոտ, որն առաքյալին ընդունում է հարգանքով՝ իբրև Քրիստոսի պատգամավոր: Թադեոսը Արգարին հարցնում է, եթե հավատում է Հիսուս Քրիստոսին՝ Աստծո Որդուն, պիտի բժշկվի: Արգարը պատասխանում է, որ ինքը արդեն հավատացել էր Նրան և իր Հորը: Այս լսելով՝ Թադեոսը ձեռքը դնում է Արգարի վրա և բժշկում է նրան և քաղաքի բոլոր հիվանդներին:

Ապա Թադեոսը ազատորեն քարոզում է Ավետարանը: Բոլորն էլ հավատքի են գալիս և մկրտվում. թե՛ Արգար թագավորը և թե՛ քաղաքի բնակիչները: Փակվում են կռատների դռները: Այդպես առանց դժվարությունների հավատացյալների թիվը բազմանում էր օր օրի: Ապա առաքյալն իր քարոզությունը շարունակում է բուն Հայաստանում՝ Սամատրուկ իշխանի՝ Արգարի թեռորդուն և պալատին ու ողջ ժողովրդին:

Արգարը նամակ է գրում Հռոմի Տիբերիոս կայսերը, որի իշխանության ներքո էր գտնվում և ինքը, ասելով, թե Քրիստոսի կատարած գործերը հաստատում են, որ Նա Աստված է և, հետևաբար, անհրաժեշտ է, որ Նրա անունը և Ավետարանը քարոզվի ամեն տեղ իր աշակերտների կողմից, որոնց ձեռքով և մեծամեծ հրաշքներ են կատարվում, ինչպես արդարև պատահեց իր հետ: Ուստի նախ խնդրում է, որ պատժի հրեա ժողովրդին, որ խաչեցին Նրան, և ապա արտոնի և տնօրինի, որպեսզի ամեն տեղ պաշտվի Քրիստոս իբրև ճշմարիտ Աստված:

Այսպես Արգարի հավատը առիթ դարձավ, որ Եդեսիայում, իսկ հետո նաև ողջ Հայոց աշխարհում տարածվի քրիստոնեության լույսը:

ԴԵԿՏԵՄԲԵՐ 16

ՍՈՒՐԲ ՀԱԿՈՐ ՄՈՐԵՆԱ ՀԱՅՐԱՊԵՏ

Սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետը հայտնի և սիրելի սուրբ է որքան ասորիների, նույնքան էլ հայերիս մոտ: Ծնվել, մեծացել, գործել և վախճանվել է Մծբին քաղաքում, որն այսօր հայտնի է «Նուսեյբին» անվամբ, գտնվում է Թուրքիայի հարավ-արևելյան սահմանին: Իր կյանքի առաջին տարիներն անց է կացրել ուսմամբ և հոգևոր կրթությամբ: Երիտասարդ հասակից ճգնողական և աղոթական կյանք վարելու նպատակով առանձնացել է անապատում:

Երբ Մծբին քաղաքի իր ժամանակակից եպիսկոպոսը մահացավ՝ քաղաքի երկու հակադիր հոսանքների կողմից երկու թեկնածուներ ներկայացվեցին: Մարուզե ճգնավորի խորհրդով բոլորն էլ միաբանվեցին Հակոբ ճգնավորի շուրջ և նրան անապատից բերել տալով՝ 320 թ.



Սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետ «Հայտնավոր», 13-րդ դար Չաղկոզ՝ Թորոս

եպիսկոպոս ձեռնադրեցին Ամիդայի մեջ:

Սուրբ Հակոբի կյանքը լեցուն էր հրաշագործ դրվագներով, որոնք պարզապես վկայում են, թե ինչ աստիճանի ժողովրդականություն վայելող հոգևոր գործիչ էր նա: Նրա ուսուցիչը եղել է Մարուզե ճգնավորը, իսկ ինքն էլ հանդիսացել է Եփրեմ Խուրի Ասորի մեծ մատենագրի ուսուցիչը: Ներկա է եղել 325 թ. Նիկիո Տիեզերական ժողովին, որտեղ, ըստ ավանդության, մեծ հարգանքի է արժանացել Կոստանդինոս Մեծ կայսեր և ժողովականների կողմից: Արդարև, ընդդեմ Արիոսի և արիոսականության, որոնք դատապարտված էին Նիկիական ժողովում, Քրիստոսի եկեղեցու ուղղափառության մեծ պաշտպաններից մեկը եղավ: Մինչև իսկ ավանդությունը ասում է, որ Արիոսը նրա անեծքի կամ աղոթքի միջոցով արժանացել է չարաչար մահվան: Աղոթքով, հնարամտությամբ և իր ժողովրդին սրտապնդելով՝ երկու-երեք անգամ իր քաղաքն ազատել է պարսկական պաշարումից: Նա իրապես եղել է իր ժողովրդի անձանձիր հովիվը և հոգեշահ քարոզիչը: Սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետն իր մահկանացուն է կնքել 338 թվականին: Նրա նշխարները, որոնցից շատ կա մեր եկեղեցում, 970 թ. տարվել են նաև Կ. Պոլիս, որտեղ մեծ հարգանքի են արժանացել:

Հայերս նրա հիշատակը տոնում ենք Հիսնակի պահոց երրորդ շաբաթ օրը:

ԴԵԿՏԵՄԲԵՐ 9

ՀՂՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ԱՆՆԱՅԻՑ

Վետարանում Սուրբ Մարիամ Աստվածածնի կյանքի պատմությունից հիշատակվում են միայն այն դրվագները, որոնք ուղղակի առնչություն ունեն Հիսուսի կյանքի և փրկչական տնօրինությունների հետ: Նրա կենսագրության մնացյալ, այսինքն՝ մեծագույն մասը, ամբողջացվում է այն ավանդություններով, որոնք մեզ են հասել եկեղեցական գրականության հետ:

Ըստ այդմ՝ Մարիամը Դավթի ցեղից էր: Նա աստվածատուր գավակ էր, որովայնից ընտրյալ, և նրա ծնունդը հրեշտակն է ավետել: Աստվածածնի բարեպաշտ ծնողները՝ Աննան և Հովակիմը, թեև երկար տարիներ ամուսնացած էին, սակայն գավակ չունեին, քանի որ Աննան ամուսնու էր: Նրանք միշտ անդադար աղոթում ու խնդրում էին Աստծուն, որ Նա իրենց գավակ պարզվի: Չնայած առաջացած տարիքին՝ չէին հուսալվում և անընդհատ աղոթում էին Աստծուն՝ Նրանից ողոր-



Սուրբ Աննայի՝ Աստվածամայրը գրկին Նկարիչ՝ Հայկ Ազարյան

մություն հայցելով:

Եվ մի օր Տիրոջ հրեշտակը այցելում է նրանց և հայտնում, որ շուտով գավակ կունենան, ուն անունը ողջ աշխարհում պիտի տարածվի, և նա օրհնյալ կլինի կանանց մեջ: Նրանց աղաչանքները լսելի են լինում Աստծուն, և Աստված պարզում է մի աղջիկ, որին կոչում են «Մարիամ»:

Մարիամի ծնունդից առաջ Աննան արդեն ուխտել էր մանկանը նվիրել Աստծո ծառայությանը: Երբ մանուկը երեք տարեկան դարձավ, ծնողները նրան տարան տաճար ընծայելու՝ ըստ իրենց ուխտի: Քանի որ երեխան փոքր էր, քահանայապետը Հովակիմին և Աննային ասաց, որ Մարիամին բերեն տաճար, երբ նա դառնա յոթ տարեկան: Սուրբ Մարիամը տաճարում ապրեց յոթ տարի՝ սնվելով ու հասակ առնելով առաքինությամբ և աղոթքներով:

Հղություն Սուրբ Աստվածածնի Աննայից տոնն անշարժ տոն է և նշվում է դեկտեմբերի 9-ին:

ԳՐԱՆԿՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ՀԱՄԱՐ ԿԵՆՍԱԿԱՆ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ Է

«Շողակն Արարատյան» ամսաթերթի գրուցակիցը գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Տաթևիկ Մերջանյանն է:

-Խոսենք մերօրյա գրականության և գրականագիտության մասին:

-Այսօր մի տարածված տեսակետ կա, ըստ որի՝ մերօրյա գրականությունը մահվան ճանապարհին է, և որևէ լավ բան իր հետ չի բերում: Ես, մեղմ ասած, համաձայն չեմ այս տեսակետին, որովհետև մեր Ոսկեդարից (5-րդ դար) հետո մեզանում երբեք մեծ ժամանակաշրջան չի եղել: Չեմ բացառում, որ եղել են անկումային շրջաններ, բայց դրանք չեն խաթարել գրականության և ընթերցողի մշտադադար կապը: Ըստ իս՝ կարդացող անհատը նույնիսկ ամենադժվար ժամանակաշրջանում չի կարող չկարդալ, որովհետև առհասարակ արվեստն ու մշակույթը, տվյալ դեպքում՝ գրամշակույթը հույժ կարևոր է մարդու ինքնաճանաչման, արժեքների վերաբերման և աշխարհաբաղադրական տարբերությունների տիրույթներում ճիշտ կողմնորոշվելու համար: Այլ խոսքով՝ գրականությունը մարդու համար կենսական անհրաժեշտություն է: Ի պատասխան մեր այս տեսակետին հակադրողների մեծաքանակ բանակի այն պնդումներին, թե այսօր ավելի առաջնային են տեղեկատվական տեխնոլոգիաները, նկատենք՝ վերջիններս, իհարկե, կարևոր են մարդու կյանքում, բայց, այնուամենայնիվ, այն, ինչ ստեղծվում է աղանդորու ձեռքով, մշտարդիական և անփոխարինելի է: Այս առումով հարկ է հիշել Պարույր Սևակի «Առաջագրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին» բանաստեղծությունը, որով մեր հայ բանաստեղծը, հակադրվելով իր ժամանակներում նույնպես խիստ արդիական հաշվիչ մեքենաների դերին, նույնիսկ համաշխարհային գրականության մակարդակով գեղարվեստորեն հաստատեց այն վաղեմի ճշմարտությունը, ըստ որի՝ ոչ մի հաշվիչ մեքենա կամ համակարգիչ չի կարող ստեղծել, առավել ևս՝ վերածվել ճշմարիտ գրականության: Այսպիսով, մերօրյա գրականությունը, հարափոփոխ ժամանակներին զուգընթաց փոխելով իր գրական ընկալումների շրջանակն ու դրսևորումների կերպերը, շարունակում է իր հաղթական ընթացքը: Հայտնի ճշմարտություն է, որ դեռևս վաղմջական ժամանակներից սկսած գրողները հակադրվում են իրենց իրականությանը: Նույնը նաև

այսօրվա գրականությունն է: Նկատի ունեն ոչ թե ուղեկից (էպիգոն) գրականությունը, որը գրական միջավայրին իբրև «հակադրություն» ներկայանում է բնազդային և սեռախտաբանական անհասկանալի գեղարվեստականացումներով, այլ համամարդկային արժեքներով դիտարժան այն գրականությունը, որը հիմքում կրում է բացառապես ազգային դիմագիծ: Ուղեկից գրականության ընդեր-

դությանը ի հայտ բերել մինչ այժմ ստվերում մնացած կարևոր իրությունները:

-Այլազգի ուսանողների հետ աշխատելու դժվարությունների և առավելությունների մասին: Ի՞նչ է տալիս Ձեզ նրանց հետ աշխատելու փորձը:

-Այլազգի ուսանողներին մեր հայոց լեզուն իր ողջ շքեղությամբ դասավանդելու աշխատանքը,

ռոն են իրենց մայրենի լեզուներին, որպեսզի իրենք հետաքրքրությամբ փորձեն հասկանալ արտաբնական իրարից խիստ տարբեր, բայց ներքուստ լեզվաբանական որոշ աղբյուրներ ունեցող լեզուների ընդհանրությունները: Ըստ իս՝ ոչինչ հեշտ չէ այս արագընթաց կյանքում: Դասավանդումը բացի մասնագիտական լուրջ պատրաստվածությունից պահանջում է նաև անմնացորդ սեր և նվիրվածություն: Կարելի է ասել, որ այս եռամիասնության համադրության շնորհիվ է կայանում նրանց գիտելիքի յուրացումը: Անկախ ազգային պատկանելությունից՝ նրանք իրենց պարզությամբ, շիտակությամբ և անկեղծությամբ փոխադարձում են այդ սերն ու նվիրվածությունը: Ըստ այդմ՝ բացի դասախոս և ուսանող հարաբերություններից ինքնաբերաբեր ձևավորվում է նաև մի հետաքրքիր միջազգային ընկերություն:

անչափ ուրախանա, այլ ընդամենը պահպանի այս երկուսի հավասարակշռությունը, իր բառով ասած՝ կյանքի ռիթմը: Կորուստների ու ձեռքբերումների շրջապատյուն անխուսափելի է մարդու կյանքում: Ըստ էության՝ մարդու թույլ կետը հնարավորություն է տալիս իրեն գտնել նաև ուժի տիրույթում, որովհետև այդ երկուսը գտնվում են նույն տեղում: Այստեղ առաջնային են մարդու կամային հատկանիշները, այսինքն՝ դժվարությունների և կորուստների հետևանքով մարդը չպիտի կորցնի ոգու ամրությունը, իսկ ձեռքբերումների դեպքում թույլ չտա, որ իր բանականությունն ու ողջամտությունը երբևէ մթազմի հաջողությունների փայլից: Կյանքը շարունակաբար կտորում է մարդ արարածին: Կտորվում է նա, ով հակված է կտորվելու: Խոսքը ոչ թե մեծ հաջողությունների և ձեռքբերումների, այլ դիմացկունության, կամային որակների ձևավորման և զարգացման դրսևորումների մասին է: Այս տեսանկյունից հետաքրքրաշարժ է Լևոն Բաշալյանի «Սյուզեմի վարպետ» նորավեպը, որտեղ հեղինակը ամփոփ գեղարվեստականացմամբ ներկայացնում է դժվարություններին դեմ հանդիման կանգնած կնոջ պայքարունակության ամրակուռ կերպերը:

-Կյանքի շարունակական ընթացքի մեջ կամ կորուստների և ձեռքբերումների մասին...

-Կյանքի շարունակական ընթացքի մեջ շատ կարևոր է չկորցնել սեփական դիմագիծը, պահպանել ներաշխարհի մաքրությունն ու ոգու անաղարտությունը: Պետք չէ վախենալ, խուսափել դժվարություններից, որովհետև դրանք մեզ ավելի են կոփում: Կրկին Պ. Սևակի հետաքրքիր միտքը հիշեցի.

«Դու մի՛ անցիր ասֆալտ ճամ-



Տաթևիկ Մերջանյան

բից վեր են բարձրանում այնպիսի անհատներ, որոնք, դառնալով բացառապես բանաստեղծական իրենց աշխարհի տերը, ուրվագծում են տվյալ ժամանակաշրջանի գրականության ճշգրիտ դիմագիծը: Կարելի է ասել, որ այսօրվա գրականությունն ընթանում է իր կայացման ճանապարհով: Իսկ ինչ վերաբերում է այսօրվա գրականագիտությանը, ապա ուշարժան է, որ այն ևս ունի բեղմնավոր ընթացք: Գրականագիտության տիրույթում են ոչ միայն դասական պատկանելի գրականության երկերը, որոնք ուսումնասիրվում և վերաիմաստավորվում են նոր հիմնախնդիրների դիտանկյուններից, այլև ժամանակակից գրականության ստեղծագործություններն են հայտնվում ժամանակի գրականագետի տեսադաշտում:

- Գիտության ոլորտում որքանով էք կարևորում կամանց դերը:

-Անշուշտ կարևոր է կամանց դերը գիտության, այս դեպքում՝ գրականագիտության ոլորտում, որովհետև կամայք վաղուց արդեն հատել են տնակյացության սահմանը և ամեն կերպ փորձում են իրենց նպաստը ներդնել գիտության, մշակույթի, արվեստի տարաբևեռ բնագավառներում: Կանայք, տիրապետելով որևէ օտար լեզվի, կարող են համաշխարհային փորձը զուգահեռել ազգային ձեռքբերումներին, հետաքրքիր դիտողունակությամբ և դատո-

բանականաբար, հատկանշվում է և՛ դժվարություններով և՛ առավելություններով: Դժվարությունն այն է, որ ավանդական մոտեցումներով անհնար է նրանց բացատրել հայոց լեզվի հարուստ բառապաշարն ու ժամանակաձևերը, հատկապես այն դեպքում, երբ իրենք դրսում լսում են մեր առօր-



յախոսակցական լեզուն, իսկ ես իրենց բացատրում եմ գրական հայերենը. անընդհատ որոնում եմ դասավանդման դյուրին մեթոդներ, որպեսզի իրենց համար ավելի հեշտ ընկալվի հայերենը, նրանք հաճույքով սովորեն այն լեզուն, որն անընդհատ լսում են իրենց շուրջ: Հայոց լեզվի հարուստ բառապաշարի ծագումնաբանության, ստուգաբանության, իմաստաբանության բացատրությունները շատ հաճախ զուգահե-

փով, գերադասիր ճամփա՝ չինել: ...Դառն արցունքով աչքդ ցողիր
Ու քո ճամփան շարունակիր: Թո՛ղ որ լինի նա քարքարոտ, Բայց քո հոգում եթե լինի բարո՛ւ, լավի՛, սիրո՛ կարոտ,
Դու չե՛ս հոգնի, դու կքայլես. կբարձրանաս դու սարն ի վեր: Դրա համար ոգի է պետք, դրա համար պետք չեն թևեր»:
Արիստոտելն ասում է, որ մարդը ոչ թե պիտի շատ տխրի կամ

-Ներդաշնակության հասնելու ճանապարհին...

-Ներդաշնակության հասնելու ճանապարհը մեկն է. հաշտ լինել ինքդ քեզ հետ, որևէ մեկին չնեղադրել սեփական անհաջողությունների համար: Ըստ իս՝ եթե մարդը ճանաչել է ինքն իրեն, հաշտ է իր մարդկային տեսակի հետ, գիտի, թե ինչ առաքելությամբ է ապրում աշխարհում, ապա ներդաշնակ կլինի նաև աշխարհի և իրականության հետ:

-Ձեր մաղթանքը՝ մեր ընթերցողին...

-Գրասեր հանրության և առհասարակ բոլորին մաղթում եմ բարկ ոգեղենությամբ անհազ ընթերցանություն, այսինքն՝ յուրաքանչյուր գրքից քաղել այն առավելագույն դասն ու գիտելիքը, որը հնարավորություն է տալու ճիշտ կողմնորոշվել այսօրվա բարդ ու արագահոս ժամանակներում: Վստահաբար ընթերցանությունն է միակ ճշմարիտ ճանապարհը, որով մարդը կարող է ինքնակրթվել, ինքնաճանաչվել, ունենալ հստակ աշխարհայացք և կյանքի կայուն և անխառն ընկալումներ:

Պատրաստեց
Սիրանուշ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆԸ

ԼՈՒՍԱԿԻՐՆԵՐ

ՑՈՂԻԿԸ...

«Շողակն Արարատյան» ամսաթերթի սիրելի ընթերցողներ, մեր գրուցակիցը մանկավարժ, թաղիքագործ, թաղիքագործության ժողովրդական վարպետ, «Ցողեր» արվեստի կենտրոնի հիմնադիր Ցողիկ Ոսկանյանն է:

Ցողիկն աշխատում է «Հայ ասպետ» դպրոցում: Նա ձեռարվեստի ուսուցիչ է և սաներին փոխանցում է ձեռքի աշխատանքի հետ կապված այն բոլոր հմտությունները, որոնց տիրապետում է: Դպրոցում գործող «Ցողեր» արվեստի կենտրոնում էլ երեխաները սովորում են թաղիքագործություն, նկարչություն, կավագործություն, կարպետագործություն, ասեղնագործություն և այլն:

Ձրուցակիցս պատմում է, որ իր ճանապարհը դեպի թաղիքագործություն սկսվել է 2017-ից: Մինչ այդ նա թաղիքին ընդհանրապես չի առնչվել, անգամ չի իմացել՝ բրդից ինչ կարելի է ստանալ: Վեց տարի առաջ թաղիքագործության աշխարհ մտնելու հաստատուն որոշում է կայացրել: «Այնքան հետաքրքիր է, երբ հասարակ, անգամ տեղական կոշտ բրդից մշակման արդյունքում ստանում ես արվեստի գործ կամ թեկուզ առօրյայում կիրառվող առարկաներ՝ պայուսակ, կոշիկ, խաղալիքներ և այլն: Ի դեպ, եվրոպայում թաղիքագործությամբ զբաղվելն ընդունված է որպես արտաբերական միջոց: Ես դա զգացել եմ սեփական մաշկի վրա, քանի որ ձեռագործի տարբեր հմտություններն են տիրապետում, բայց այն բոլոր զգացողությունները, որ տվեց թաղիքով աշխատանքը, ուրիշ ոչնչից չեն ստացել: Սա անսահման երևակայության աշխարհ է, որտեղ դու անպայման նոր բան ես ստեղծելու, որը երբևիցե չի կրկնվում: Օրինակ՝ նույն պայուսակը չես կարող ստանալ երկրորդ անգամ: Մարդը «խաղում է» բրդով ու արդյունքում հանգում շատ հետաքրքիր լուծումների»:

Ցողիկն ասում է, որ ժամանակին թաղիքագործությունն ավելի շատ որպես արհեստ է դիտարկվել: Արևմտյան Հայաստանի գյուղերում ապրող թաղիքագործ վարպետները թաղիքից ստացել են գորգեր, բրդյա շաբլեր, հովիվների յափնջիներ և այլն: Այժմ այն գնում է նորածնության ճանապարհով՝ աստիճանաբար մտնելով արվեստի աշխարհ՝ տալով մեր հին, գեղեցիկ արհեստը վերհասնելու, ստեղծագործելու, ինչպես նաև հայ ու միջազգային հանրությանը ներկայանալու անսահման հնարավորություններ: «Թաղիքը դրանով զբաղվող մարդուն դրական էներգիա է փոխանցում, կտրում առօրյա հոգսերից, մաքրում ներաշխարհը, դարձնում բոլորովին այլ մարդ»:

Ձրուցակիցս հայտնում է, որ դասերի ընթացքում սաներին ընդհանուր պատկերացում է տալիս թաղիքագործության ծագման ու առանձնահատկությունների մասին տեսաֆիլմերի, գրույցների և, ամենակարևորը, տեխնի-

կական հմտությունների օգնությամբ: «Երեխաները, մեկ անգամ դասին մասնակցելով, սիրահարվում են թաղիքին: Չկա մեկը, որ առաջին անգամ հաճախելով թաղիքագործության, չչարունակի, որովհետև այստեղ նրանց մոտ վերանում են ներքին անհանգստություններն ու սկսում են ազատորեն ստեղծագործել: Հատկապես երեխաներին



Ցողիկ Ոսկանյան

հունչ»:
Ցողիկի կարծիքով՝ կապն արվեստի ու արհեստի հետ զարմանալիորեն փոխում է երեխայի կյանքը: «Որքան շուտ նա ծանոթանա այդ աշխարհներին, այնքան շուտ կհասկանա՝ ինչ է գեղեցիկը, այնքան ներդաշնակ կլինի բնությանը: Ես ամենից առաջ երեխաներին սովորեցնում եմ սիրել բնությունը և տեսնել ու զգալ ամեն գեղեցիկ բան, որ կա շրջապատում: Գեղեցիկի հետ շփվող, ստեղծագործող մարդիկ չեն կարող չար բան անել: Մենք ձևավորում ենք երեխաների գեղագիտական ճաշակը, ինչպես նաև՝ գունազգացողությունը: Չէ՞ որ գույները կյանքի իմաստն են: Ինչ գույներով նայում ես կյանքին, այդպես էլ ապրում ես: Հատկապես երեխաների ներսը լի է բազում վառ գույներով: Դրա համար է գուցե, որ նրանցից շատերը սիրում են նկարել: Եվ մեծահասակների խնդիրն է, որ այդ գույները հնարավորինս երկար ապրեցնեն երեխաների ներսում: Ի դեպ, երբ մեծահասակներն են գալիս թաղիքագործություն սովորելու, ես նտանում եմ՝ դա որոշակիորեն պայմանավորված է նրանց կյանքում եղած գույների պակասով, որը նրանք այստեղ փորձում են լրացնել: Ինչպես նաև լիցքաթափվում են նոր հմտություններ յուրացնելու ընթացքում, սովորում են լինել համբերատար»:
Ձրուցակիցս երեխաների հետ աշխատելիս առաջնահերթ նրանց է փոխանցում սերն արվեստի ու մարդու նկատմամբ: «Եվ հենց այդ փոխանցած սերն է, որ շատ գնահատվում է թե՛ երեխաների, թե՛ ծնողների կողմից: Սաներս իմ կյանքի անբաժանելի մասնիկներն են, դրական էներգիայի իմ անսպասելի աղբյուրն ու այս կյանքի ամենավառ գույները: Ամեն անգամ, երբ դու չես ուզում իրականությանը առնչվել, շփվիր երեխաների հետ: Որանց աշխարհում ամեն ինչ մաքուր է, պարզ ու գեղեցիկ: Վերջին շրջանում հայ ժողովրդի հետ կատարվածից հետո ես դժվարությամբ եմ զբաղվում իմ սեփական աշխատանքներով, բայց շփում երեխաների հետ օգնում է հաղթահարման ուղիներ փնտրել: Ինչպես նաև օգնում է կրկին հավատալ հեթանոսներին, ստեղծել սեփական հեթանոս, որի հերոսները մեր սաներն են»:
Ըստ Ցողիկի՝ յուրաքանչյուր որ կարող է զբաղվել թաղիքով, և ամեն մարդ իր ձեռագիրն ունի: Այդ պատճառով էլ նա պարբերաբար կազմակերպում է թաղիքագործության վարպետաց դասեր՝ սովորեցնելով թաղիքով աշխատելու տեխնիկան, որից հետո արդեն ամեն մարդ աշխատում է՝ ըստ իր կարողությունների ու երևակայության:
Ձրուցակիցս աշխատանքի հաջողության գաղտնիքը սիրով կատարված աշխատանքի մեջ է, որովհետև սերը կյանքի հիմքն է: → Էջ 8

«ԵՐԱՆԻ՝ ԱԳԱՎՈՐՆԵՐԻՆ, ՈՐՈՎՅԵՏԵՎ ՆՐԱՆՔ ԿՄԽԻԹԱՐՎԵՆ»

Մատթեոս Ե 4


ուրբ Ներսես Շնորհալին այս երանին համարում է նախորդի՝ «Երանի՝ հոգով աղքատներին...» երանիի տրամաբանական շարունակությունը: Առաջին երանին իրենից ներկայացնում է երկրորդի պատրաստությունը. մարդը պետք է նախ մաքրվի մեղքերից, ապա սգա դրանց վատ հետևանքների պատճառով: Նա առանձնացնում է սգի երկու տեսակ՝ մարդկային և հոգևոր: Առաջինը մարդու զանազան կրթերին հագուրդ տալու անկարողությունից է, որն անընդունելի է, իսկ երկրորդը գալիս է հոգևոր բարիքների պակասությունից: Այս է ընդունելի սուզը, որին երանի էր տալիս Քրիստոս: Այս երանիով մարդուն խորհուրդ է տրվում սգալ սեփական մեղքերի համար:

Սրանից զատ կարելի է առանձնացնել նաև սուգի երկու տեսակ. առաջինը մարդուն տանում է հուսահատության՝ անհաղորդ դարձնելով սիրուն և ճշմարտությանը: Այսպիսի սգակիր էր Հուդան, որն իր արարքից ցնցված՝ դիմեց ինքնասպանության: Երկրորդ տեսակի սուզը դրական երանգով է հանդես գալիս, որը տեսնում ենք Պետրոս առաքյալի պարագայում, ով Տիրոջ հայացքից ցնցված՝ դառնորեն լաց եղավ՝ վերականգնելով և վերագտնելով

կյանքի հույսը: Սուրբ Գրիգոր Տաթևացին լացը համարում է Աստծու հանդեպ սիրո արտահայտություն: Մեղքերից ազատագրումը պիտի լինի սգի միջոցով: Ըստ նրա՝ արցունքները, որ դրված են մարդու աչքերին, նրա համար են, որ տեսնելով իր պակասությունը՝ արտասվի և զղջալով՝ թողություն ստանա: Հաճախ ցավն ու նեղությունը կարող են մարդուն երանելի դարձնել: Ցավը դուռն է. այստեղից անցնելով՝ պիտի հասնենք մխիթարության՝ գտնելով մեր փրկությունը: Ցավը սովորեցնում է հեռու ապրել մեղքից և քայլել դեպի հավիտենական երջանկություն:

Սգավորներն այն մարդիկ են, ովքեր մասնակից չեն իրենց շրջապատում տիրող անօրենություններին՝ Աստծու կամքի ոտնահարմանը, բռնություններին: Միայն այսպիսի սգի օրինակ տեսնում ենք Նոր Կտակարանում՝ խաչելության իրադարձության դրվագում, երբ կանայք, կանգնած խաչի մոտ, ողբում էին անարդարության պատճառով:

Սգավորներին տրված խոստումը ակնարկում է ապագան, երբ երկնքի արքայությունը երկրի վրա կհասնի իր լրմանը: Երկնքի արքայության մաս են կազմում



հոգով աղքատները: Այս երանիում սգավորները իրենց խոստմանը կհասնեն վերջին դատաստանի օրը: Այս պատկերը ներկայումս ունենք մեր հասարակության մեջ, բայց սրա կողքին կան նաև այնպիսի մարդիկ, ովքեր հենց այս սգավորների պես են, ովքեր, լինելով չարի տիրապետության տակ, հակառակ են գործում չարի օրենքներին և նրա կամքին, որոնց երանի է տալիս Քրիստոս: Ինչ-որ իմաստով այս սգավորները դառնում են չարչարակից այն իրադարձություններին, որոնք կատարվում են իրենց շուրջ:

Այս խոսքերն ասվել են մեզանից 2000 և ավելի տարիներ առաջ, բայց այսօր էլ ունեն նույն իմաստն ու մեկնաբանումը: Մենք՝ շատերս չենք էլ փորձում նկատել կամ հաշվի առնել մեր շուրջը կատարվող անօրենությունները, մինչդեռ Քրիստոս երանի է տալիս այն մարդկանց, ովքեր սգում են աշխարհի անարդարությունների վրա: Մխիթարությունը հենց այն երկնքի արքայության վայելումն է այսօր, որ մենք, եթե հոգով աղքատ ենք, արդեն իսկ մասն ենք կազմում այդ ժառանգության:

Պատրաստեց Ալբերտ սարկավագ ՍԱՀԱՅԱՆԸ

ՀՈԳԵՎՈՐ ԱՆԴԱՍՏԱՆ

ԲՈԼՈՐ ՉԱՐԻՔՆԵՐԸ ՄԵՐ ՍԽԱԼՆԵՐԻՑ, ՍԻՐԵԼՈՒ, ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԱՆԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԵՆ

Թե Աստված սեր է, կարող է պատժել. հաճախ մտածում ենք մենք: Շատերս մեր կյանքում տեղի ունեցած դժբախտությունների պատճառը վերագրում ենք Տիրոջ քայլերին: Հատկապես, երբ բարդ դրության մեջ է հայտնվել Հայաստանը, այս հարցն արդիական է. Աստված՞ է մեզ պատժում, թե՞...:

«Շոդակն Արարատյան» ամսաթերթի գրուցակիցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի տնօրեն Տեր Եսայի քահանա Արթնյանն է:

Սե՞ր, թե՞ պատիժ

Միանշանակ Աստված սեր է և որևէ դեպքում, որևէ մեկին չի պատժում: Այն փորձությունները, դժվարությունները, որոնք մենք դիտարկում ենք իբրև պատիժ, մեր սխալների հետևանքն են: Մեզ սովորաբար պատժում են մեր գործած այն մեղքերը, սխալները, որոնք չենք խոստովանում, շտկում: Մեր կյանքում պատահած բոլոր չարիքները, փորձությունները, դժվարությունները գալիս են մեր սխալներից, մեղքերից, սիրելու, պայքարելու մեր անկարողությունից:

Պատիժը՝ Հին ու Նոր Կտակարաններում. օրենքի ու սիրո իշխանություն

-Հին Կտակարանի և Նոր

Կտակարանի սկզբունքներն այս առումով տարբեր են: Հին Կտակարանում ժողովուրդն առաջնորդվում էր Մովսիսական օրենքներով, Տասնաբանյա պատվիրաններով: Հրեա ժողովուրդն էր դրանք պահանջել Աստծուց, որ-



Եսայի քահանա Արթնյան

պեսզի իմանա՞ ի՞նչ է կարելի և ի՞նչ՝ ոչ: Այն ժամանակ ժողովրդին նաև զգուշացվել էր, որ եթե կա օրենք, առաջնորդվում եք դրանով, այն խախտելու դեպքում՝ պետք է պատժվեք:

Մեր իրականության մեջ էլ այդպես է, եթե խախտվի որևէ երկրի օրենք, պետք է պատիժ կրել:

Հին Կտակարանում օրենք էր

խախտվել, օրինախախտները պետք է պատժվեին: Եթե Աստված նրանց պատժեր օրենքի ողջ խստությամբ, պիտի կործաներ նրանց. չկար փրկություն: Այդ դեպքում Աստված կլիներ արդար, բայց ոչ ողորմած: Այդ

աստվածային սիրո, ողորմության մեջ: Նոր Կտակարանի իրականության մեջ մենք ազատվեցինք օրենքի իշխանությունից և առաջնորդվում ենք սիրո օրենքով: Աստված օրենքից առավել կարևորեց սերը: Ասաց, որ իր և ժողովրդի, հավատացյալ մարդկանց միջև հարաբերությունները կարգավորվում են սիրով: Այն ենթադրում է ողորմություն, ներողամտություն, գթասրտություն:

Պատիժ նաև դիմացինի մեղքերի համար

-Յուրաքանչյուր արարք ունի հետևանք, որը կարող է անդրադառնալ նաև մեր շրջապատի վրա: Հնարավոր է, որ մեր սխալների պատճառով տուժեն մեր հարազատները: Այդ պատճառով քրիստոնեության մեջ ընդգծվում է, որ պիտի լինենք շատ ուշադիր մեր գործած մեղքերի, սխալների նկատմամբ, որովհետև դրանք անդրադառնալու են ոչ միայն մեր, նաև մեր շրջապատի վրա: Հետևաբար մենք պատասխանատվություն ենք վերցնում մեր կողքին գտնվող մարդկանց համար: Շատ կարևոր է, որ ավելի զգոն, ուշադիր, խելամիտ գտնվենք:

Ով մերում խնդրի, կստանա -Աստված միշտ պատրաստ

է մեզ ներել, եթե անկեղծ է մեր զղջումը, ապաշխարությունը: Անթույլատրելի է մտածել, որ կարելի է մեղք գործել, հետո ներում խնդրել, միևնույն է Աստված ներելու է: Դա ոչ մի կապ չունի քրիստոնեության հետ:

Երբ ասում ենք ապաշխարություն, մեղքերի թողություն, հասկանում ենք, որ մարդ անկեղծորեն հասկանում է իր մեղքերի ծանրությունը, տեսնում է իր սխալները, խոստովանում է հստակ որոշումով, որ պետք է դրանք չկրկնի կամ շտկի:

Ցանկացած սխալ արարքի դեպքում մարդ պետք է ոչ միայն ներողություն խնդրի, նաև պատասխանատվություն վերցնի իր գործած սխալի ու դրա հետևանքների համար:

Ապաշխարությունը և պատիժը երկնային կյանքում

-Մենք ապաշխարում ենք այս կյանքում: Երկնային կյանքում ապաշխարության խորհուրդն իր ուժը, այսպես ասած, կորցնում է, դրա իմաստն արդեն չկա: Երկնային Արքայության մեջ մենք արդեն սպասում ենք Քրիստոսի երկրորդ գալստյանը՝ հույսով, որ Աստված մեզ կնայի իր սիրով և ողորմությամբ:

Պատրաստեց ԱՌԻ ԱՎԱԳՅԱՆԸ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋԻՆ ԼՈՒՍԱՎՈՐԻՉՆԵՐԸ

«Գնացե՛ք, ուրեմն աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցե՛ք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով» (Մատթեոս 28. 19):

Ստանալով Տիրավանդ այս պատգամը՝ Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալները եկան Հայոց աշխարհի և դարձան առաջին լուսավորիչները. քարոզեցին քրիստոնեությունը բիբլիական երկրի ժառանգներին և հիմնադրեցին Եկեղեցին, որ և կոչվեց Սուրբ ու Առաքելական՝ ի վկայություն առաքելախառնատ հիմնադրման:

Հայոց աշխարհում քրիստոնեության առաջին ուսուցիչների կյանքն ու քարոզչությունը լավագույն օրինակը հանդիսացան կռապաշտության խավարի մեջ թաղված լույսի և հույսի կարոտյալներին, ովքեր և դառնալու էին այն պարարտ հողը, որն իր վրա պետք է կրեր Տաճարն Արարչի:

Սրբոց վարքի ու վկայաբանությունների ժողովածուներում և մեր պատմիչների երկերում տեղ գտած Սրբազան ավանդության համաձայն՝ առաջինը Հայաստան է գալիս Թադեոսը, ով Հերոնիմոսի կողմից ստացել է Եռանվանի (Trinomius)՝ «երեք անուն ունեցող մարդ» կոչումը, քանզի Ավետարանում հիշատակված է մի քանի անուններով՝ Թադեոս (Մարկոս 3.18), Ղեբեոս (Մատթեոս 10.3) և Հուդա (Դուկաս 6.16, Գործք առաքելոց 1.13): Սուրբ Թադեոսը, մինչ Հայաստան հասնելը, արդեն քարոզել էր ասորական Միջագետքում, այնուհետև Եդեսիայում բազմաթիվ հրաշքներ էր գործել և բժշկել Աբգար թագավորին: Առաքյալը Մեծ Հայք է հասնում Հայոց Սանատրուկ թագավորի օրոք, որի դուստրը՝ մանկահասակ զեղեցկուհի Սանդուխտը, հորից ծածուկ սովորեց Հիսուսի մասին ուսուցանվածը և ընդունեց քրիստոնեությունը: Սանատրուկը սկզբում ամեն ջանք գործադրեց սիրեցյալ դստերը վերադարձնելու հեթանոսական կրոնին, սակայն, տեսնելով իր անզորությունը, ի վերջո հրամայեց սպանել նրան: Սրբազան ավանդության համաձայն՝ երեք օր Սանդուխտի մարմնի վրա երկնքից իջած լույս է տարածվում, մինչև որ Թադեոս առաքյալը հողին է հանձնում, իսկ հետո ինքը ևս նահատակվում է: Թադեոսին նախ գցում են առյուծների առաջ, սակայն գազանները նրան չեն վնասում, որից հետո գցում են կրակի մեջ, սակայն, աստվածային հրաշքով, այս անգամ էլ նրան ոչինչ չի պատահում: Ի վերջո, վճռվում է նրան սրով սպանել, ինչն

ի կատար է ածվում, և իսկույն մոտակա վեճը ճեղքվելով առաքյալի մարմինն իր մեջ է առնում և փակվում:

Սուրբ Թադեոսն իր հետ Հայաստան բերեց սուրբ Գեղարդը, որն այսօր պահվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ինչպես նաև մի բաժին այն յուղից, որ Հիսուս փոխան-



ցել էր առաքյալներին և որը մինչ օրս պահպանված է Սրբալույս Մյուռոնում՝ շնորհիվ մյուռոնօրինության ժամանակ իին Մյուռոնից որոշ մաս նորին խառնելու սրբազան ավանդույթի:

Սուրբ Թադեոսին Հայքի աշխարհում հանդիպեց սուրբ Բարդուղիմեոս առաքյալը, ով իր քարոզչությունն սկսեց Սյունյաց նահանգի Որդվատ գյուղից, որտեղից անցավ Գողթն գավառ: Հեր և Ջարևանդ գավառներից էլ նա անցում է Անձևացյաց գավառի Աղբակ քաղաք, որտեղ նրա կողմից

ծավալված Սուրբ Հոգով լեցուն քարոզխոսությամբ քրիստոնեություն է ընդունում նաև Սանատրուկի քույրը՝ Իշխանուհին (Ոգուհին), իսկ հետո Տերենտիոսը՝ հազարապետը, ով ուղարկվել էր արքայի կողմից Իշխանուհուն պատժելու նպատակով: Սանատրուկ թագավորի հրամանով Բարդուղիմեոսը, Ոգուհին և Տերենտիոսը ներկայացվում են ատյան և ընդունում նահատակության պատկեր:

Սուրբ Բարդուղիմեոս առաքյալն է Հայաստան բերել Տիրամոր պատկերը և զետեղել Անձևացյաց գավառի «Պարեցաց քար» կոչված վայրում, ուր հետագայում, ի պատիվ Տիրամոր պատկերի, կուսանոց է հիմնվել:

Հայոց Եկեղեցին սուրբ Թադեոս և սուրբ Բարդուղիմեոս առաքյալներին հիշատակում է նախ՝ տասներկու առաքյալների շարքում, ապա՝ Հիսուսի առաջին կիրակիին հաջորդող շաբաթ օրը՝ «Տոն առաջին լուսավորիչների» անվամբ, որն այս տարի տոնախմբվում է դեկտեմբերի 2-ին: Սուրբ Թադեոսը, սակայն, հիշատակվում է ևս մեկ անգամ՝ սուրբ Սանդուխտի հետ միասին:

Սիա հենց այս սրբերի անվան հետ է առնվում հայոց լուսավորության և նրա փառահեղ Եկեղեցու հիմնադրման պատմությունը, ովքեր դարձան հայ քրիստոնյայի և Աստծո միջև միջնորդներն ու կենդանի կրողներն իրական քրիստոնեության, որոնց կյանքը մինչ օրս լավագույն օրինակն է քարոզչականության և առ Աստված տածած անսասան հավատքի:

Արդ, լուսավորիչների հիշատակության օրն ընդունեց որպես մեր հոգիների վերանորոգության ընծայված ևս մեկ հիանալի հնարավորություն և ապաշխարելով մոտենանք Արարչին. «Որևէ մեկը, որ միացած է Քրիստոսին, նոր արարած է, նա այլևս այն չէ, ինչ որ նախապես էր, որովհետև նա անբողջությամբ նորոգվեց» (Բ Կորնթացիներ 5.17):

Առաքյալների տոնը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակով 2014 թվականին հռչակվեց նաև Սուրբ Գեղարդի ուխտի օր՝ ամփոփելով առաքյալների բարեխոսությամբ պարուրված օրն Աստվածամուխ միզակից բխող օրինությամբ:

Պատրաստեց Լաուրա ԱՐԱՋԱՆՅԱՆԸ

ՆԱՐԵԿԱՑԻՆ ԵՎ ՆԱՐԵԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ (հատվածաբար)


Սկիզբը՝ թիվ 10-ում

10-րդ դարում հայ մշակույթի վաղ վերածնունդն ավետող առաջին մունենտիկն է Գրիգոր Նարեկացին. վկայում են Վալերի Բրյուսովը, Աշոտ Մկրտչյանը, Մկրտիչ Մկրյանը և Վազգեն Զալոյանը: Նա հայ ոգու վիթխարի ժայթքումն է, մեր մշակույթի Արարատը, որի համար չկան սահմանափակումներ, ձևեր, ուղղություններ, որոնք սոսկ պայմանական հասկացություններ են... Նա կերտել է գեղեցիկ, մաքրամաքուր արվեստ, որը, անշուշտ, ունի իր օրինաչափությունները: Նրա պոեզիայի գլխավոր հերոսը մնում է մարդը՝ իր լավ ու վատ, անցողիկ ու հավերժական տառապանքներով, անտեսանելի, անվերջ մաքառումներով, մշտափոփոխ ակնկոծումներով: Նարեկացին խտացումն է մարդկության անհանգիստ, ապստամբ ոգու և անմահության մարմնացումն է:

...Համաշխարհային գրականության ու արվեստների մեջ երկար դարերի պատմություն ունի այն տարերային, հաճախ չգիտակցված ներքին կռիվը, որ սկսվել է գրական տիպերի արվեստական ու միակողմանի բացահայտման բնագավառում, մարդկանց երկու՝ չար ու բարի խմբերի բաժանելը: Նման կողմնորոշումը գալիս է վաղ հնադարից: Հունական դիցաբանության մեջ հանդիպում ենք բարի և չար աստվածների երկու ստվար խմբի: Նույնն է պարագան պարսկական կրոնի մեջ: Այս երկվորյակից բաժին ընկավ նաև քրիստոնեական կրոնին:

Բոլոր ժողովուրդների մոտ արվեստները միշտ ենթակա են եղել տիրող գաղափարախոսությանը և, մասնավորապես, կրոնական ազդեցությանը: Բարու և չարի այս օրինակ միամիտ ըմբռնումից դուրս գալու ուղղությամբ եվրոպական վերածննդի հսկաները մեծ քայլեր արեցին: Դանթեի մոտ ճնշիչը մնում է նման բաժանումը: Գյոթեի

մոտ կերպարները թեև աչքի են ընկնում իրենց բնավորությունների հակոտնյա հատկանիշների միասնությամբ, բայց բարի և չար կերպարների որոշակի սահմանագատման միտումը ակնհայտ է՝ Ֆաուստ-Մեֆիստոֆել: Շեքսպիրի մոտ ևս բարու և չարի պայքարը լուծվել է հօգուտ անցյալի՝ Յագո-Օթելլո, Համլետ-Կլավդիոս:



Մինչդեռ Նարեկացու քնարական հերոսն իր մեջ խտացում է մարդուն հատուկ բոլոր բարի ու չար, կատարյալ ու թերի, գեղեցիկ ու տգեղ հատկանիշները: Նարեկյան հանճարի վիթխարի լուսարձակներն ուղղվում են մարդկային անափ հոգու խորքերը և պեղելով այն՝ գտնում են, որ չկան բարի և չար, գեղեցիկ և տգեղ, գովելի և անգովելի, ատելի կամ պաշտելի մարդիկ: Կա մարդ՝

բարությամբ ու չարությամբ, լավով ու վատով, լույսով ու խավարով լեցուն. «Արեգակնք երկուի յերկուց ծայրից մինն խաւարի և միւսն կիզման»: Մեր ժողովրդի հազարամյակների տառապանքն է խտացված «Մատյան»-ում, հույսերն ու ակնկալությունները: Այն մի ամբողջական դարապատում է: Նարեկացին մեն-մենակ չպիտի կարողանար կերտել իր ժողովրդի անմահության մատյանը, եթե հայ ժողովրդի ծաղկող դարավոր մշակույթը (հեթանոս ու քրիստոնյա), դարերի փորձություններով թրծված ու բյուրեղացած ոգին նրան չընձեռներ նման հնարավորություն: Նարեկացու ժողովուրդը պետք է նրա չափ տառապած լիներ, նրա պես պայքարած մեղքի դեմ՝ հանուն հոգեկան վեհության, հանուն անարատության: Այս հազարամյա հեռավորությունից միայն այսօր է ամբողջովին հասկանալի դառնում Նարեկացու տիեզերական ողբը: Նա գրեց հայ ժողովրդի և, ընդհանրապես, մարդկության ողբի, տառապանքի, ամենամաքուր երազանքների, կատարելության, հույսի, հավատի մատյանը... Նարեկացին մեր կյանքի վիթխարի բարդին է, որի արմատները գնում են հեթանոս դարերի առեղծվածային խորքերը: Քանզի խոսել Նարեկացու մասին՝ նշանակում է ի մտի ունենալ հայ ժողովրդի ողջ անցյալը, ներկան ու գալիքը:

(Հարունակելի)

Սասուն Վարդանյան, «Նարեկացին և Նարեկագիտությունը», անտիպ էջեր

Պատրաստեց Սիլվա ՍՈՒՔԻԱՍՅԱՆԸ

ՍՈՒՐԲ ԱՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՄԱՐՏԻՐՈՍ

Ուրբ Ստեփանոսի վարքը արժանանում է «Ճառնետի»-ներում, «Հայսմավուրք»-ներում, միջնադարյան տաղերում: ԺԹ դարից սկսած գրառվել են սուրբ Ստեփանոս Նախավկային նվիրված ժողովրդական ավանդազրույցներ, երգեր, աղոթքներ, հանելուկներ:

Հայ եկեղեցու եռանձնավար դարապետ սուրբ Գրիգոր Տառնագին իր «Ամարան Հատոր»-ում գրում է, որ Ստեփանոսը գնում է սուրբ Պետրոս և սուրբ Հովհաննես առաքյալների մոտ և մկրտվում: Մկրտության պահին ջրի վրա երևում է լուսապսակ: Այդ զարմանահրաշ ղեպքից հետո նրան անվանում են «Ստեփանոս», որ նշանակում է «պսակավոր»: Գործք առաքելոցից հայտնի է, որ Հոգեգալստից հետո առաքյալները կարիքավորներին նպաստներ էին բաշխում: Եվ օրեցօր Հիսուսին հավատացողների թիվն ավելանում էր: Քանի որ առաքյալներն ի վիճակի չէին հոգալ բոլորի կարիքները, ուստի իրենց հետևորդներին պատվիրում են, որ բարի համբավ ունեցող յոթ մարդ ընտրեն սեղանները սպասարկելու համար:

Առաքյալները Քրիստոսից ստացած իշխանությամբ զանա-

զան հրաշքներ էին գործում ժողովրդի մեջ: Ըստ Դուկաս Ավետարանչի՝ ընտրյալների մեջ էր նաև Ստեփանոսը, «որ հավատով և Սուրբ Հոգով լցված մի մարդ էր» (Գործք 6:5): Երիտասարդ Ստեփանոսը, լցված լինելով Սուրբ Հոգու շնորհներով ու զորությամբ, Հիսուսի մասին վկայում էր ոչ միայն խոսքով, այլև զարմանալի գործերով ու նշաններով: Նրա քարոզներն ու անվեհեր կեցվածքը, իմաստությունը և հաստատականությունը գրգռում էին հրեաներին, որի պատճառով և նրանք Ստեփանոսին համարում են հայրիոյիչ և հերձվածող. ի վերջո նրան դատապարտում են մահվան: Ստեփանոսը դառնում է եկեղեցու առաջին մարտիրոսը: Նրա նահատակության վայրը երուսաղեմի արևելյան դարպասն էր, որը հետագայում կոչվեց «Ստեփանոսի դուռ»:

Սուրբ Ներսես Շնորհալի կաթողիկոսը ևս անդրադառնում է նահատակ Ստեփանոս Նախավկայի կերպարին իր «Տաղ Սրբույն Ստեփանոսի Նախավկայի, Տեառն Ներսեսի Կաթողիկոսի» տաղի մեջ.

«...Ի խաչին տընկեալ որբոյն Ողկույզ վաղահաս խայծեալ...
...Փառաց թագաւորն երկնից

Յայտնեալ զհնուորին յերկրի -Ի յասպարիսիդ վասն իմ Դու մի՛ երկընչիր,-ասէ...
...Սուրբըդ Ստեփանոս պսակ եւ նախամարտիկ վըկայ, Վասըն տաւնողացըս քո Լեր միշտ բարեխոս առ Տէր...
...Խաչին խաղաոյ նորոյ ի յուրախութիւն Մատըռուակելով, Սուրբ Ստեփանոս....

Համարելով նրան Քրիստոսի առաջ բարեխոս՝ շարունակում է. ...Ստեփանոս, պըսակ շնորհաց գըթգ պըսակողին, Լեր միշտ բարեխաւս զմեզ կեցուցանել...
...Ամենարինեալ կուսի Մարիամու Աստուծածնի՝ Մեծին ի ծնունդս կանանց, Նախահրաւեր այսմ շնորհի Մկրտչին Յովհաննու, Նախնոյ վկայից եւ սարկաւագաց՝ սրբոյն Ստեփանոսի, Առաքելովք եւ մարգարէիք, Մարտիրոսաւք եւ ճգնաւորաւք, Եւ համարէն սովաւ աւծելովք արդարոցն Եւ որ այսր աւծմամբ զմեզ Լուսաւորչի՛ սրբոյն Գրիգորի:...»:

Սուրբ Ստեփանոս Նախավկան սիրված է ժողովրդի կող-



Սուրբ Ստեփանոս Նախավկա «Ճառոց», 1460 թ., Արծկե Ծաղկող՝ Մինաս

մից այդ են վկայում բազմաթիվ ավանդազրույցները, ժողովրդական ընկալումներով հյուսված աղոթքներ, ինչպես, օրինակ.

Սուրբ Ստեփանոս Նախավկեն,

Ինքը ճերմակ, ձին ճերմակ, Ընկավ ծովը՝ ծովը ճերմակ.

Կալի կշտով անցկացավ....

Այստեղ նկարագրվում է սրբի կերպարի ժողովրդական պատկերացումը: Այս և ուրիշ ժողովրդական պատկերացումներ, իհարկե, շեղվում են աստվածաշնչյան պատմությունից: Գոյություն ունեն սուրբ Ստեփանոս Նախավկայի անունը կրող բազմաթիվ վանքեր և եկեղեցիներ, մատուռներ, ուր ողջ տարին հավատավորներն ուխտի են գնում:

Նյութի աղբյուրը՝ «Հայկազեան հայագիտական հանդես», 2018 թ.

Պատրաստեց ԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆԸ



«ՈՐԸ ԲԱՐԻՆ Է, ԹՈՂ ՂԱ ԷԼ ԿԱՏԱՐՎԻ»

«Եվ կճանաչեք ճշմարտությունը, և ճշմարտությունը ձեզ կազատի»:

Հովհաննես 8.32

Ուր որ անցնեք, ուր որ երթեք, թողե՛ք ձեր հրե՛նց տունն ու զնա՛ցե՛ք այլ երկիր՝ Մոր տան, մոր կյանքի, մոր հորի-գոնների հետևից, գիտե՛ն սեփական փորձառությանը՝ ոչ այլոց պատմա-ծով, թե որքան բարդ ընթացք է դա, որ-քան ներքին ու արտաքին ռետուրս է պա-հանջվում մարդուց այդ ուղին անցնելու և չկտրվելու համար:

Ես ևս բացառություն չեմ: Հայաստա-նից զնալուց և ԱՄՆ-ում հաստատվելուս կես տարվա ընթացքում անգամ բազում դժվարությունների միջով եմ անցել: Այդ ճանապարհին միակ բանը, որն ինձ իսկա-պես պինդ է պահել, հավատն է: Հավատը, որ ես Աստծո ավերի մեջ եմ, որ Նա ինձ եր-բեք մե՛նակ չի թողնի, որ ամեն դժվար բան կոփում է ինձ ու, ի վերջո, ինձնից կերտ-վում է իմ լավագույն տարբերակը: Դեռ ոչ մի հասկ չի ծլարձակել հողից՝ առանց սեր-մի ցավի, պայթյունի, մահվան: Հիմա ես այդ սերմն եմ՝ աշխարհի ամենագեղեցիկ ու դժվար քաղաքներից մեկում: Այստեղ ես ցավում եմ, պայթում, մեռնում՝ ամեն օր: Որ ծիլ տամ, ծաղկեմ, շատ լինեմ:



Միգուցե լսած լինե՞ք՝ որքան բարդ է Նյու Յորքում բնակարան վարձակալելը: Նույնիսկ եթե գումար՝ շատ գումար ունե՛ս: Իսկ եթե շատ գումար չունե՛ս՝ էլ ավելի, գրեթե անհնար: Համակարգն այնպիսին է, որ պիտի դժոխային պարունակների մի-ջով անցնես՝ հաջողությամբ բնակարան վարձելու համար: Պիտի նյարդերդ ամուր

լինեն: Մոտ մեկ ամիս ես ու ամուսինս ամե-նօրյա գրաֆիկով զբաղված էինք բնակա-րան փնտրելով: Փնտրում էինք, գտնում, հավանում, դիմում՝ ստանում հերթական մերժումը՝ դա լավագույն դեպքում: Վա-տագույնում՝ հայտը մնում էր անպատաս-ԱՄՆ-ից, և՛ Հայաստանից՝ անգամ: Ով ին-չով կարող էր: Մեր գույրում ապրող տա-տիկիցս եկած օգնությանն ամենաշատն էի հավատում, որովհետև նա Աստծուն ամենամոտ կանգնած մարդկանցից մեկն է իմ ճանաչածներից: Տերը նրան առանձ-նակի հոգածությամբ է լսում՝ ինչպես ինքն է աւուս: «Տասո՛ղ տերտերի թոռ ա»: Եվ իրոք: Տատիկիս խնդրում էի աղոթել, աղո-թել մեզ համար: Որ տուն գտնենք: Տատս ամեն անգամ ասում էր՝ աղոթում եմ, առանց քո ասելու նաև: Անցավ ժամանակ, այդպես էլ ոչ մի տուն չգտնվեց: Մնաց միակ տարբերակը՝ տեղափոխվել այստեղ բնակվող իմ բարեկամներից մեկի սեփա-կան տուն՝ իրենց հետ ապրելու: Բարե-կամներս պատրաստ էին հյուրընկալելու մեզ՝ անժամկետ, առանց որևէ գումարի: Եվ մենք բնավ առաջին մարդիկ չէինք, ում իրենք տանիք են տվել՝ ԱՄՆ-ում ապրելու 20 տարիների ընթացքում: Երբ զանգեցի իրենց, ասելու, որ զալիս եմ՝ հեռախոսի մյուս կողմից լսեցի. «Վա՛յ, Ենցի՛ ջան, ինչ լավ բան ասացիր, քեզ Աստված ա ուղար-կել»:

Այդ ժամանակ մոտավոր գիտե՛ի ին-չու ինչե՛ք այդ արտահայտությունը: Հետո՛ լրիվ հասկացա:

Այս տանը, որտեղ ապրում եմ հիմա, ապրում է նաև բարեկամուհուս քաղցկե-ղով հիվանդ մայրը: Իրեն խնամք ու սեր էր պետք, որը ես կարող էի ապահովել, երբ մնացած բոլորը գնալիս աշխատանքի: Պիտի անկեղծ լինե՞մ՝ սկզբում շատ ծանր էր համակերպվել այդ իրականությանը, որ պիտի ինձ անձանք, իր կյանքի վերջին ամիսներն ապրող կնոջ մասին հոգ տա-նեմ: Ներսից ընդդիմանում էի՝ այդ ես սրա

համար չեմ, այդ ես չեմ կարող, այդ ես գիտե՛լիք, ու՞՞ չունեմ, համբերություն չու-նեմ: Բայց հետո պարզվեց՝ ունեմ, ավելիով ունեմ և բնավ պատահական չեմ հայտնվել այդ իրավիճակում: Մեզ չի տրվում ոչ մի փորձություն, որը մեր ուժերից վեր է: Ու-ժը տրվում է փորձության հետ: Տերը ինձ հազարերորդ անգամ սովորեցնում է սեր, սովորեցնում է խոնարհություն, համբե-րություն, կամք, ուժ: Եվ ամենակարևորը՝ տալիս է հնարավորություն ուղիղ, շատ ու-ղիղ նայելու իմ ամենամեծ վախի՝ քաղց-կեղի աչքերի մեջ, մահվան աչքերի մեջ: Ամեն օր ես տեսնում եմ մահը՝ մոտիկից, կամաց, լուռ մոտեցող մահը, ու էլ ավելի եմ սիրահարվում կյանքին: Էլ ավելի շատ եմ ուզում ստեղծագործել, էլ ավելի շատ եմ փորձում կյանքս, ամեն օրս իմաստա-լից ապրել: Ես այնտեղ եմ, որտեղ պե՛տք է լինեմ: Տան փնտրտուքները, հիմա եմ հասկանում, բոլորովին անիմաստ էին, դա սահմանաված չէր ինձ համար՝ առավազն հիմա: Եվ այլ առաքելություն ունե՛ի:

Դա հետո հասկացա, երբ վերջին մեր-ժումը ստանալուց հետո տատիկիս հարց-րի. «Տա՛տ, ինչի՛՞ չստացվեց տունը, այդ աղոթում էինք ամենախորը հավատով»: Տատս պատասխանեց. «Բայց ես չէի աղո-թում, որ տուն գտնեք, ասում էի՝ որը բա-րին է, թող դա էլ կատարվի»:

Տերը լսել էր տատիկիս՝ հազարերորդ անգամ, բերել ինձ մի խաղաղ տուն, որ-տեղ ես պիտի սովորեմ սիրելու և հոգ տա-նելու մոր ձևեր, մոր լեզուներ: Բարին կա-տարվեց: Ու ես երախտապարտ եմ՝ սրտիս ողջ ուժով:

ԱՄՏԵԿԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ՄԵՂԱՆՉԵՑԻ՛, ՀԱՅՐ

«Ասացի՛ ինքս խոստովանեմ մեղքերս, և Դու թողություն կտաս»:

Սաղմոս 32.5

Իմ ծնունդն էլ Ադամի ծնունդի նման դրախտում եղավ, ինչպես և Ադամից հետո մինչև ինձ եղած բոլոր ծնունդները: Անհոգ խաղերն ու մանկական բերկրանքով լեցուն առօրյան լիացնում էին մեր կյանքն այն-պես, որ, կարծում եմ, Ադամական դրախտը մի փոքր էլ պիտի բարձրանար մեր երջան-կությանը հավասարվելու համար:

Հիշում եմ՝ երեք-չորս տարեկան էի, հայրս ինձ օդ էր թռցնում ու տունը լցնում ուրախ կանչով: «Իմ տղեն մե՞ծ մարդ է դառնալու»: Հորիցս շատ ես էի ցնծում. մեծ մարդ եմ դառնալու:

Վերջերս հաճախ եմ հիշում հայրա-կան օջախի համաչափ կարգավորությու-նը: Հիշողությանս և տեսողությանս առջև հաճախ է պատկերվում ինձ օդ թռցնող հայրս... Մի ցավ, սակայն, տանջում է հա-մառորեն. ես այլևս մանուկ օրերի պես չեմ ցնծում:

Օտարության մեջ ժամանակներ ան-ցան, ձախողումներս հաջորդեցին իրար: Մի օր էլ տեսա, որ այնպես եմ բոլոր գոր-ծերս ձախողել, որ ամեն ինչի հանդեպ անհույս պարտվածի նման անտարբեր եմ դարձել: Հնարավոր էր դա այն աստիճանն է, որում ամեն մարդ հիմնավոր փոփոխու-թյուններ է ունենում: «Մարդու հոգին Աստծո լույսն է» (Առակաց 20.27), սրտի խորքերը քննում, դարձի հրավեր է ուղարկում:

Ոչ ոք բացահայտ ոչինչ չէր ասում, բայց օդում շրջում էր մեղմ, հանդիմանող ժպիտն ու երբեմն նաև կծու ծաղրը. «Ու՛ր է քո Աստվածը» (Սաղմոս 42:3): Անոթի ու խայտառակության այս խորտորատից ինչ-պե՛ս գտնել էլքի դուռը:

Բարդ հանգույցը քանդելու համար եր-կար մտածումներ ունեցա: Աստիճանաբար հանգեցի այն մտքին, որ եթե անհրաժեշտ գործությունն ունենայի, Հիսուս իմ փոխա-

րեն չէր խաչվի: Հայրական տան պատկեր-ների հիշողություններն ամեն օր ցավեց-նում էին սիրտս, բայց առաջին քայլ կա-տարելը հետաձգվում էր անհիմնալի ձևով՝ վաղը վճռական կլինեմ, այսօր թույլ եմ: Այն ժամանակ, երբ հասկացա, որ այս դիրքո-րոշումը կարող է երկարաձգվել մինչև կա-րուստս, հիշեցի հայրական օջախում պա-տահած մի դիպված: Հորս երկու ընկերներ հավատքի վերաբերյալ անզիջում վեճի մեջ էին մտել: Նրանցից առաջինը այնպես էր գիտնվեցել, որ գլուխը սեղանին դրեց ու քնեց: Մյուս ընկերն այս տեսնելով՝ հաղթա-կան վերջակետ դրեց.

«Ես եմ ճանապարհը...» (Հովհաննես 14.6):

Այդ խոսքը ինձ ոչ միայն արթնացրեց, այլև էլքի հույս դարձավ երկմտության ճամփաբաժանից: Գյուղի ծայրին խորի-րավոր մի եկեղեցի ունեինք: Նրա տեսքն այնպիսին էր, ասես մեկը գորավոր հաղ-թություն էր տարել ու հիմա արքայավայել նստած՝ բարի լուրի էր սպասում: Եկեղե-ցուն հարող բլրի լանջով ամռանը կանաչի վրայով էինք սահում, իսկ ծմռանը՝ ծյան: Երբ հոգնում էինք, վազում էինք, բլրի ստո-րուտում թփի տակ քաքքված Կաթնաղբ-յուրի մոտ նստում, համազատունում էինք ու ծարավը հազեցնում նրա կաթնահամ ջրով:

Ես, այդ, երեխա ժամանակ ամեն Աստծո օր կարողում էի եկեղեցու մուտ-քի վերևի քարին փորագրված այդ խոսքն ու զարմացած թոթովում ուներս: Մտքիս թևին կանգնեցի եկեղեցու դռան առջև... Դո՛ւ ես ճանապարհը, իմ մանկության օրե-րի սու՛րբ տաճար: Քեզ հարող բլրի սա-ռը աղբյուրը դեռ կա՞: Ինձ այդ աղբյուրի մոտ տար, տուն տար ինձ: Հիշողությանս մեջ վերականգնվեց հորս ընկերոջ խոս-քի շարունակությունը. «Ոչ ոք չի գա Հոր մոտ, եթե ոչ ինձանով» (Հովհաննես 14.6) և ես աղաղակեցի սրտիս մեջ. «Հիսու՛ս, Աստված իմ, ինձ Հորս տուն տար»: Գնամ, ասեմ. «Մեղանչեցի՛, Հայր...»:

Մեկը շքեցա. «Վեր կաց, քայլի՛ր»: Այդ ձայնն ինձ զորացրեց: Վեր կացա, քայլեցի: Որոշ ժամանակ քայլելուց հետո զգացի, որ մարմինս առույգ է և թեթև: Մարմնացա: Անս-պասելի ուրախությունից շփոթվեցի, նստե-ցի քարի վրա ու փորձեցի գրկել հենց նոր գտած հույսի գանձը:

«Հիսու՛ս, Աստված իմ, Դո՛ւ ես ճանա-պարհը»:

Վեր կացա, մորից քայլեցի: Քայլերս զորացան, հստակվեցին: Հիշում էի, որ հայրական տուն եմ գնում, և քայլերս թեթ-ևանում էին: Շուտով իմ Կաթնաղբյուրից ջուր եմ խմելու, փարվելու եմ եկեղեցու քարերին: Մտքիս հայացքը երկինք հա-ռեցի, շքեցաքի մեղավորի պես. «Հայր, ես արդեն ուղիղ եմ քայլում, արքունական ճամփով քայլողի նման (Բ՝ Օրինաց 5.32): Մարդիկ ողջունում են ինձ: Նախկինում ծաղրողն անգամ օգնության ձեռք է մեկ-նում: Ես ուշադիր նայում էի ու հասկանում, որ դա Քո՛ ձեռքն է. «Ամեն ինչ բարուն գոր-ծակից է դարձնում իր Անունը սիրողների համար» (Հռոմեացիս 8.28):

Ես Քո Սուրբ Գրքի երկրպագուն դար-ծա ու տեսա իմ ճամփան, որ սովորաբար խաղատուն և այլ կործանարար վայրեր էր առաջնորդում: Մի օր էլ Պատարագի ժա-մին եկեղեցի մտա, քահանան աչքերիս մեջ նայեց և օրհնեց Քո խոսքով.

«Իմ ժողովրդի համար բարություն անելով պիտի ուրախանամ» (Երեմիա 32.41):

Վախվորած՝ Կենաց Հացի ճաշակման անզուսպ փափագ հայտնեցի և այնպես ցնձացի, երբ քահանան ինձանից առավել ուրախացավ:

Հիմա սրտիս ամեն զարկը հուշում է, որ շատ մոտ եմ մեծ մարդ դառնալու հորս ցանկությանը և այն չկորցնելու համար ամեն քայլիս շքեցում եմ.

«Մեղանչեցի՛, Հայր...»

Արամայիս ՇԻՍԱԼՅԱՆ

ՑՈՂԻԿԸ...

Էջ 5 ←

Ու երբ ամիսներ առաջ Ցողիկին շնորհվեց ժողովրդական վարպետի կարգավիճակ՝ թաղիքագործության ոլորտում, նա առավել մեծ պատաս-խանատվությանը լցվեց իր գործի հանդեպ՝ հստակ գիտակցելով այն միտքը, որ պիտի ստեղծել մնայուն արժեքներ ու թողնել սերունդներին: Չրուցակցիս ցանկությունն է, որ թաղի-քագործությունն էլ կավագործության պես, օրինակ, լայն տարածում ստա-նա, ու հայ մարդու վարպետ ձեռքերը, գույնի իրաշալի զգացողությունն ու յուրահասուն ճաշակն իր արդյունքը գրանցի թաղիքագործության ճանաչ-ման և առավել ժողովրդական դառնա-լու ճանապարհին:

Ցողիկը համոզված է՝ պիտի ապ-րես ու ստեղծագործես քո երկրում, քո երկրի համար. «Պիտի լինել լավ մարդ ընտանիքում, հասարակության մեջ և զբաղվել սիրած գործով: Ինչպես նաև, պիտի սիրել բնությունն ու մարդկանց՝ արժևորելով ապրածը ամեն մի օրը: Այդ ժամանակ էլ կյանքն ուրիշ ձև կնա-յի քեզ, որովհետև իմ խորին համոզ-մամբ յուրաքանչյուր մարդ ստանում է այն, ինչ ինքն է ուզում այս կյանքում: Եվ այս ամենի մեջ իմ ամենամկի-րական երազանքն է, որ Հայաստան աշխարհում հաստատվի երկարատև ու մեզ բոլորիս այնքան անհրաժեշտ խաղաղությունը»:

Արփի ԽԱՉԱՏՐՅԱՆ